

# ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## LESSONS FROM ARMENIA'S TRANSITION ECONOMY

### УРОКИ ПЕРЕХОДНОЙ ЭКОНОМИКИ В АРМЕНИИ

Միքայել Միքայելյան<sup>1</sup>, Գաբրիել Միքայելյան<sup>2\*</sup>  
Mikayel Mikayelyan<sup>1</sup>, Gabriel Mikayelyan<sup>2\*</sup>  
Микаел Микаелян<sup>1</sup>, Габриел Микаелян<sup>2\*</sup>

<sup>1</sup>Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան  
M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Armenia  
Институт экономики им. М. Котаняна, Национальная академия наук, Армения

Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան, Հայաստան  
V. Bryusov State University, Armenia  
Государственный университет им. В. Брюсова, Армения

<sup>2</sup> Հայաստանի պետ. տնտեսագիտական համալսարան, Հայաստան  
Armenian State University of Economics, Armenia  
Армянский государственный экономический университет, Армения

\* Գրագրություն վարող հեղինակ՝ miqayelyan.gabriel@asue.am  
Author for correspondance miqayelyan.gabriel@asue.am  
Автор, ведущий корреспонденцию: miqayelyan.gabriel@asue.am

Հեղինակների ներդրումը. ՄՄ – գաղափար, նախնական տեքստ; ԳՄ – խմբագրում  
Author contrubutios: MM – concertualization, writing original draft; GM – editing  
Вклад авторов: ММ – концептуализация, написание текста; ГМ – редактирование

The authors declare no competing interests  
Հեղինակները հայտարարում են շահերի բախման բացակայության մասին  
Авторы заявляют об отсутствии конфликта интересов

Received: 20.11.2025; Revised: 30.01.2026; Accepted: 14.04.2026  
Ներկայացվել է՝ 20.11.2025; գրախոսվել է՝ 30.01.2026; ընդունվել է՝ 14.04.2026  
Представлено: 20.11.2025; рецензировано: 30.01.2026; принято: 14.04.2026

© The Author(s), 2026. This article is distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence  
© Հեղինակ(ներ), 2026: Հոդվածը տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով  
© Автор(ы), 2026. Статья распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-68

*Ամփոփում* – Հայաստանի տնտեսության անցումային շրջանի առաջին տասնամյակն անցել է տնտեսական ու սոցիալական զգալի կորուստներով: Իշխանության եկած ուժը, չունենալով զարգացման ծրագիր, մշակված ռազմավարություն և նույնիսկ հայեցակարգ, պատրաստ չի եղել դիմագրավելու շուկայական համակարգի մարտահրավերներին: Ընդօրինակելով ՌԴ-ին՝ փորձ արվեց շուկայական համակարգին անցնել «շուկային թե-

րապիայի» չարդարացված ճանապարհով: Շուկայական տնտեսության անցնելու պարագայում ազգային դրամը շրջանառության մեջ դնելը և ապրանքների գների ու ծառայությունների սակագների ազատականացումը ժամանակային առումով միմյանց հետ սերտորեն կապված սոցիալ-տնտեսական երևույթներ են: Սակայն Հայաստանում (ինչպես նաև ԱՊՀ-ում) ժամանակային և տարածական առումով դրանք իրականացվեցին միմյանցից անկախ, որը չէր կարող տնտեսական և սոցիալական բացասական հետևանքներ չունենալ: Հայաստանը, հետևելով նախկին խորհրդային հանրապետություններին 1992 թ. հունվարի 5-ից ազատականացրեց ապրանքների (ծառայությունների) գները (սակագները): Երկիրը պատրաստ չէր նաև ազգային դրամանիշները ժամանակին շրջանառության մեջ դնելուն (նախկին խորհրդային հանրապետությունների մեջ այստեղ ազգային դրամանիշը շրջանառության մեջ դրվեց վերջինը): Շուկայական հարաբերությունների կայացման վրա իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև առանց համապատասխան նախապատրաստության սեփականաշնորհման ու ապապետականացման գործընթացը (չիրականացվեցին պետական օբյեկտների գույքագրում և վերագնահատում, առկա չէր մրցակցության պաշտպանության օրենսդրություն): Այս ամենի հետևանքով մյուս հետխորհրդային երկրների մեջ ՀՀ-ն արձանագրեց տղաճի և տնտեսական անկման վատագույն ցուցանիշները: Հայաստանի իշխանության պատասխանատու մարմինները հեռանկարային զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրեր մշակելիս պետք է հաշվի առնեն անցումային տնտեսության ձևավորման դասերը:

*Abstract* – The first decade of the Armenian economic transition was marked by significant economic and social losses. The incoming government, lacking a development program, a developed strategy, or even a concept, was unprepared for the challenges of the market system. Following the example of the Russian Federation, an attempt was made to transition to a market system through the unjustified use of "shock therapy". In the case of a transition to a market economy, the introduction of a national currency and the liberalization of prices for goods and tariffs for services are socioeconomic phenomena closely linked in time. However, in Armenia (as in the CIS), these processes were implemented independently of each other in time and space, which inevitably had negative economic and social consequences. Armenia, following the example of the former Soviet republics, liberalized prices (tariffs) for goods and services on January 5, 1992. Furthermore, the country was not prepared to introduce national banknotes in a timely manner (among the former Soviet republics, national banknotes were the last to be introduced). The process of privatization and denationalization, which was not properly prepared, also negatively impacted the development of market relations (an inventory and revaluation of state-owned assets was not conducted, and competition protection legislation was absent). As a result, the country recorded the worst inflation and economic decline rates among other post-Soviet countries. Armenia's authorities should consider the lessons of the transition economy when developing long-term socioeconomic development programs.

*Аннотация* – Первое десятилетие переходного периода армянской экономики ознаменовалось значительными экономическими и социальными потерями. Пришедшее к власти правительство, не имея программы развития, разработанной стратегии и даже концепции, не было готово к вызовам рыночной системы. В подражание РФ была предпринята попытка перехода к рыночной системе неоправданным путем «шоковой терапии». В случае перехода к рыночной экономике введение в обращение национальной валюты и либерализация цен на товары и тарифов на услуги представляют собой

социально-экономические явления, тесно связанные во времени. Однако в Армении (как и в СНГ) они осуществлялись независимо друг от друга во времени и пространстве, что не могло не иметь негативных экономических и социальных последствий. Армения, вслед за бывшими советскими республиками, либерализовала цены (тарифы) на товары (услуги) 5 января 1992 года. Кроме того, страна не была готова ввести своевременно в обращение национальные банкноты (среди бывших советских республик национальные банкноты были введены в обращение в последнюю очередь). Процесс приватизации и денационализации без надлежащей подготовки также негативно сказался на формировании рыночных отношений (не была проведена инвентаризация и переоценка государственных объектов, отсутствовало законодательство о защите конкуренции). В результате всего этого страна зафиксировала худшие показатели инфляции и экономического спада среди других постсоветских стран. Ответственным органам Армении следует учитывать уроки формирования переходной экономики при разработке долгосрочных программ социально-экономического развития.

Հիմնաբառեր – Հայաստան, շուկա, տնտեսություն, ծրագիր, ռազմավարություն:

Keywords – Armenia, market, economy, program, strategy.

Ключевые слова – Армения, рынок, экономика, программа, стратегия.

### **Ներածություն**

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը, ինչպես նաև մնացած 14 հանրապետությունները, ձեռնամուխ եղան նոր տնտեսական (շուկայական) հարաբերությունների ձևավորմանը: Դրանց զգալի մասը (այդ թվում՝ Հայաստանը), ընդօրինակելով Ռուսաստանի Դաշնությանը (ՌԴ), փորձ արեց դրանց հասնել «շուկային թերապիայի» ուղիով: Մերձբայթյան հանրապետությունները, որոնք դեռևս խորհրդային տարիներին որոշակի չափով նախապատրաստվել էին անկախացմանը, անցումային շրջանն առավել կազմակերպված, նվազագույն կորուստներով և բավականաչափ արագ հաղթահարեցին: Իսկ մյուսներն ունեցան տնտեսական և սոցիալական զգալի կորուստներ: Հայաստանում այդ կորուստները օբյեկտիվ (1988 թ. երկրաշարժ, Արցախյան 1-ին պատերազմ, շրջափակում, գաղթականների հոծ բազմություն) և սուբյեկտիվ (շուկայական տնտեսակարգին անցման և զարգացման հստակ ու գիտականորեն հիմնավորված ռազմավարության բացակայություն, փորձառու և կայացած կադրերի փոխարեն առանցքային պաշտոնները զբաղեցրեցին անփորձ, բայց հեղափոխական պաթոսով տոգորված երիտհիշականները) պատճառներ ունեին:

Անցումային շրջանում տնտեսական բնագավառում թույլ տրված որոշակի սխալներ կրկնվել են նաև հետագայում:

Հետազոտության նպատակն է վեր հանել անցումային շրջանում տնտեսական քաղաքականության մեջ թույլ տրված սխալներն ու բացթողումները և դրանք հետագայում հաշվի առնել տնտեսության զարգացման ռազմավարությունների մշակման ժամանակ:

### **Գրականության ակնարկ**

Հայաստանի անցումային շրջանի տնտեսության զարգացման վերաբերյալ մեծ թվով ուսումնասիրություններ կան: Նկատի ունենալով, որ դրանցում առկա են բազում խնդիրներ և ի հայտ են եկել մեծ թվով հարցադրումներ, սույն հետազոտությունում անդրադարձ է կատարվել միայն մի մասին:

Հեղինակներից մեկը ներկայացնում է ագրարային հարաբերությունների վերափոխման ընթացքը (Ֆահրադյան 1996). հետագայում այդ մասին նշվել է նաև Մարդկային զարգացման ազգային զեկույցում (ՄՁԱՁ 2001):

Անցումային շրջանում ֆերմերային տնտեսության ձևավորման վերաբերյալ կատարվել է ուսումնասիրություն: Արդեն 1991–1992 թթ. իրականացված վերափոխումների հետևանքով ապապետականացվել է գյուղատնտեսական հողահանդակների 90 տոկոսից ավելին (Մկրտչյան 1996, 58):

Այս շրջանին վերաբերող մեծ թվով հետազոտություններ է կատարել Ա. Մարկոսյանը: Դրանցից մեկում հեղինակը ներկայացրել է ագրարային ոլորտում իրականացված վերափոխումների արդյունքները: Ըստ նրա՝ 1992 թ. հունվարի 1-ի դրությամբ սեփականաշնորհվել է գյուղատնտեսական հողերի 55%-ը, անասունների 70%-ը, տեխնիկայի 35%-ը, ինչպես նաև լուծարվել է կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների 83%-ը (Մարկոսյան 1995, 45): Հանգամանորեն վերլուծել է այդ գործընթացի կարգավորումների օրենսդրական հիմքերը (Մարկոսյան 1995): Նա նաև անդրադարձել է Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման ռազմավարությանը (Մարկոսյան 1996):

Հետազոտություններից մեկում բերվել է Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների ֆինանսական ոլորտների՝ շուկայական հարաբերություններին անցնելու փորձը: Այն համադրվել է Հայաստանում առկա իրողության հետ (Ավետիսյան 1999):

Ռազմավարական կառավարման անհրաժեշտությունն է ըստ ամենայնի հիմնավորել պրոֆեսոր Յու. Սուվարյանը (Սուվարյան 1996): Տնտեսության զարգացման նպատակային ծրագրի կարևորության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարել Մ. Քոթանյանը (1982), Բ. Եղիազարյանը (1995):

Խորհրդային տարիների Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՀԽՍՀ) ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Թ. Ջատիկյանը դիտարկել է անցումային շրջանի առաջին երկու տարիներին երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, ներկայացրել սեփականաշնորհման ու ապապետականացման հարցերը և տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու վերաբերյալ առաջարկներ կատարել (Ջատիկյան 1993):

Հայաստանի անցումային շրջանում բանկային համակարգի ձևավորման գործընթացն է ներկայացրել ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը (Սարգսյան 1999):

### **Հողվածի տեղեկատվական հիմքը և մեթոդաբանությունը**

Հետազոտության համար հիմք են ծառայել ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական հրապարակումները և առանձին հետազոտողների ուսումնասիրությունների արդյունքները:

Կիրառվել են գիտական վերացարկման, վերլուծության, համադրության, մակաճության, արտածման, համանմանության, այլ հավասար պայմանների, պատմական և տրամաբանական մեթոդները:

### **Վերլուծություն և քննարկում**

Անցումային տնտեսությամբ երկրների զարգացման փորձը ցույց է տվել, որ այն երկրները, որոնք շուկայական հարաբերություններին անցել են ծրագրավորված, քայլ առ քայլ, մեծ հաջողություններ են արձանագրել (Չինաստան, Արևելյան Եվրոպայի որոշ երկրներ, օրինակ՝ մերձբալթյան երկրներ և այլն): Նրանք նախ ստեղծել են համապատասխան օրենսդրական դաշտ (ներառյալ՝ մրցակցության պաշտպանության օրենսդրությունը), որի շնորհիվ հիմնականում ապահովվել է տնտեսության կայուն զարգացումը:

Իսկ ի՞նչ է շուկայական համակարգը կամ «կապիտալիզմը»: Որո՞նք են դրա բնորոշ գծերը: Բնորոշ գծերից կարևոր է տնտեսական ազատությունը: Ապրանք արտադրողները ազատ են ընտրություն կատարելու, թե՛ ի՞նչ արտադրել (կամ ծառայություն մատուցել), ռեսուրսները որտեղի՞ց ձեռք բերել (ո՞ր վաճառողից), ո՞ւմ վաճառել (մատուցել) արտադրված ապրանքը (ծառայությունը):

Տնտեսական ազատության պայմաններից մեկը մասնավոր սեփականության առկայությունն է: Կապիտալիզմի պայմաններում մասնավոր սեփականությունը համընդհանուր բնույթ է կրում: Մասնավոր սեփականության իրավունքի շնորհիվ է, որ իրացվում է ձեռներեցության և ընտրության տնտեսական ազատությունը:

Շուկայական հարաբերությունների զարգացումն ապահովվում է նաև մեկ այլ կովանի, այն է՝ **անձնական շահի** շնորհիվ: Մարդն իր բնույթով եսասեր է: Տնտեսական գործունեության մեջ նա հետապնդում է իր անձնական նպատակը: Յուրաքանչյուր առանձին անհատ մշտապես ձգտում է առավել օգտավետ կիրառել իր տնօրինած կապիտալը: Բայց նա նկատի ունի հատկապես իր սեփական օգուտը, բնավ էլ ոչ հասարակության օգուտը: Բայց երբ նա նկատի ունի իր սեփական օգուտը, անխուսափելիորեն նախապատվություն է տալիս զբաղվածության այն տեսակին, որն առավել շահավետ է հասարակությանը (Смит 1962, 330): Վաճառողները ձգտում են առավել բարձր գնով վաճառել իրենց ապրանքը (ռեսուրսը), իսկ սպառողները՝ առավել ցածր գնով գնել դա: Առանձին անհատների անձնական շահերը սահմանափակվում են մյուսների շահերով: Դրանցով հանդերձ, «անտեսանելի ձեռքի» շնորհիվ ի հայտ է գալիս շուկայի մեկ այլ կովան՝ մրցակցությունը, որի միջոցով ապրանք վաճառողներից (սպառողներից) յուրաքանչյուրը ձգտում է այդ ապրանքը վաճառել (գնել) լավա-

գույն պայմաններով: Զարգացած շուկայական հարաբերությունների պայմաններում առաջին պլան է մղվում պետության կարգավորիչ դերը:

Շուկայական տնտեսական համակարգ կառուցող յուրաքանչյուր երկիր պետք է առաջնորդվի այս կռվաններով, հաշվի առնի իր զարգացման առանձնահատկությունները և ընտրի այդ համակարգին անցնելու ուղիներից մեկը՝ աստիճանակա՞ն թե՞ «շուկային թերապիայի»:

ԽՍՀՄ-ի տարածքում նոր տնտեսական (շուկայական) հարաբերությունների ձևավորումը կայացավ որոշակի առանձնահատկություններով:

1. Խորհրդային պետությունը, նրա բոլոր մարմինները գործել են «...սոցիալիստական օրինականության հիման վրա», իսկ «Պետական և հասարակական կազմակերպությունները, պաշտոնատար անձինք պարտավոր են պահպանել ՍՍՀՄ սահմանադրությունը և սովետական օրենքները» (ՍՍՀՄ սահմանադրություն 1983, հոդված 4):

2. Դեռևս ԽՍՀՄ տարիներին մերձբալթյան հանրապետությունները, նախորդ դարի 80-ական թվականների վերջերից սկսած, նախապատրաստվել են քաղաքական անկախությանը (Էստոնիան 1988 թ. նոյեմբերի 16-ին ընդունեց անկախության հռչակագիր, Լատվիայի ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ 1989 թ. հուլիսի 27-ին՝ Տնտեսական ինքնուրույնության մասին օրենք և այլն) (Միքայելյան 2021): Անկախության ջատագովները ոչ միայն ժողովրդական շարժման ներկայացուցիչներն էին (Ժողովրդական ճակատը՝ Էստոնիայում, Սայուդիսը՝ Լիտվայում), այլև կուսակցական և պետական առաջնորդները, հանգամանք, որը թույլ տվեց տնտեսական վերափոխումներին պետական մակարդակով նախապատրաստվել:

3. Որոշ հանրապետություններում շուկայական հարաբերություններին անցնելու ընտրած ուղին որոշակի խնդիրներ առաջացրեց: Դրանց մեծ մասը, ընդօրինակելով Ռուսաստանի Դաշնությանը, ընտրեց «շուկային թերապիայի» ճանապարհը: Իսկ դա բացասական (առանձին դեպքերում՝ ողբերգական) հետևանքներ ունեցավ:

Հայաստանը՝ որպես Խորհրդային Միության 15 հանրապետություններից մեկը, դատապարտված էր ընտրություն կատարելու վարչաիրամայական տնտեսական ու քաղաքական համակարգից շուկայականին անցնելու եղանակների միջև: Դատապարտված էր այն առումով, որ պատրաստ չէր այդպիսի ընտրության համար: Այդ տարիներին «անկախություն» բառը «քաղցր» երազ էր թվում և՛ իշխանության եկած քաղաքական ուժի, և՛ ամբողջ ժողովրդի համար: Իշխանության ներկայացուցիչների մի մասը անկեղծորեն ձգտում էր որքան հնարավոր է շուտ հասնել շուկայական տնտեսության բաղձալի արդյունքներին: Նրանց մի մասն էլ, անձնական շահից դրդված, հակված էր անցումային շրջանում օգտվելու իշխանական լծակների տված հնարավորություններից:

ՀԽՍՀ-ը, հետ չմնալով մերձբալթյան հանրապետություններից, խորհրդային իշխանության տարիներին փորձեց «կերտել» շուկայական հարաբերությունների հիմքերը: Այսպես, 31.10.1990 թ. ընդունվեց «Սեփականության մասին»

օրենքը: Հարկ է նշել, որ ԽՍՀՄ սահմանադրության համաձայն՝ երկրի տնտեսական հիմքը կազմել է արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը՝ պետական և կոլտնտեսային սեփականության ձևով (ՍՍՀՄ սահմանադրություն, 1983, հոդված 4): Պետության բացառիկ սեփականությունն են կազմել հողը, դրա ընդերքը, ջրերը, անտառները: Պետությանն են պատկանել նաև տնտեսության տարբեր ճյուղերում և ոլորտներում եղած արտադրության հիմնական միջոցները, բանկերը, քաղաքային հիմնական բնակարանային ֆոնդը և այլն (հոդված 11):

«Հայաստանի անկախության մասին» հռչակագիրն ընդունվել է 1990 թ. օգոստոսի 23-ին, իսկ «Անկախության մասին» հանրաքվեն արվել է 1991 թվականի սեպտեմբերի 21-ին (հ 0072-1): Չնայած Անկախության հռչակագրի 8-րդ կետում սեփականության բազմաձևությունը հռչակվել է որպես տնտեսավարման սկզբունքներից մեկը, սակայն այն իրավական ուժ կարող էր ստանալ միայն Գերագույն խորհրդում անկախության վերաբերյալ համաժողովրդական հանրաքվեի արդյունքները հաստատելուց, դրա վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին դիմելուց և համապատասխան եզրակացություն ստանալուց հետո: Այլ կերպ ասած՝ «Սեփականության մասին» ընդունված օրենքը իրավական ուժ չի ունեցել ընդունման պահից (ԽՍՀՄ գլխավոր դատախազությունը՝ որպես օրենքների նկատմամբ վերահսկողություն սահմանող մարմին, կարող էր բեկանել այն):

Նույն տրամաբանությամբ իրավական ուժ չեն ունեցել 1991 թվականի հունվարի 22-ին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը և հունվարի 29-ին՝ ՀՀ հողային օրենսգիրքը, 1991 թ. մարտին՝ «Առևտրի, հասարակական սննդի, վճարովի ծառայությունների օբյեկտների և անավարտ շինարարության փոքր օբյեկտների ապապետականացման մասին» ՀՀ կառավարության որոշումը:

Տրամաբանությունը «հուշում» է, որ վերոհիշյալ օրենքներին և որոշմանը, ինչպես նաև հետագայում ընդունված՝ սեփականաշնորհման ու ապապետականացման օրենքին պետք է նախորդեր տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության, շուկայական հարաբերություններին անցնելու համապատասխան ծրագրերի և հայեցակարգերի ընդունումը: Ահա այսպիսի իրավիճակում առնվազն 10 տարի ուշացումով ընդունվեց «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (06.11.2000 թ., ուժի մեջ մտավ 05.12.2000 թ.), որի 17-րդ հոդվածի «պահանջով» 2001 թ. հունվարի 13-ին նշանակվեցին ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 7 անդամները (ներառյալ՝ նախագահը և տեղակալը): Իսկ այս ամենին պետք նախորդեին շուկայական հարաբերություններին անցնելու ծրագրի և ռազմավարության մշակումն ու իրավաբանորեն վավերացումը:

Շուկայական հարաբերությունների ձևավորման առաջին գործնական քայլը կատարվեց գյուղատնտեսության մեջ: «...ագրարային վերակառուցումները Հայաստանում սկսվեցին զարնան գյուղատնտեսական աշխատանքներին զուգահեռ, առանց լուրջ և բավարար նախապատրաստման: Կոլեկտիվ և պետական

գյուղատնտեսական ձեռնարկությունների ունեցվածքն անգամ ինչպես հարկն է գույքագրման ու վերագնահատման չենթարկվեց: Դրանց համատարած լուծարումն իրականացվեց շատ սեղմ ժամանակահատվածում, անկազմակերպ և վարչահրամայական եղանակով» (Ֆահրադյան 1996, 30): Հետագայում այդ մասին նշվել է նաև Մարդկային զարգացման ազգային զեկույցում: Հողի սեփականաշնորհումը «...ետխորհրդային պետությունների շարքում Հայաստանն իրականացրեց առաջինը, դեռևս 1991 թվականին: Արդյունքում առանց գյուղացու համար անհրաժեշտ պետական աջակցության ամբողջական քաղաքականության մշակման ձևավորվեցին չափազանց մասնատված հողակտորներով շուրջ 320 հազար գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն, այն դեպքում, երբ գյուղատնտեսությունում բոլոր արտադրական միջոցները, ներառյալ նաև տեխնիկան, նախատեսված էին խոշոր տնտեսությունների համար» (ՄՋԱԶ 2001, 67):

Զեկույցում դրական է համարել այն, որ՝ «Պետական գույքի մասնավորեցման գործընթացին նախապատրաստվելու առումով կարևոր քայլ էր ՀՀ կառավարության կողմից 1991–1992 թթ. ընթացքում (մինչև սեփականաշնորհման մասին ՀՀ օրենքի ընդունումը) 335 (ընդհանուրի մոտ 4%-ը) «փոքր» օբյեկտների փորձնական վաճառքը (մանրածախ առևտուր, հասարակական սնունդ, կենցաղսպասարկում) դրանց կոլեկտիվներին 173,1 մլն ռուբլի (մոտ 1,6 մլն ԱՄՆ դոլար) ընդհանուր գումարով» (ՄՋԱԶ 2001, 67):

Կապիտալիզմին անցնելու համար անհրաժեշտ պայման էր ֆինանսական ոլորտի նախապատրաստումը այդպիսի հարաբերություններին: Պատահական չէր, որ 1990 թ. գարնանը, երբ ԱՄՆ-ի 1 դոլարը փոխանակվում էր խորհրդային 15–16 ռուբլով, այդ ժամանակ էստոնիան այն ինտենսիվորեն ձեռք էր բերում 45–50 ռուբլով և դոլարային պաշար էր կուտակում (Միքայելյան 2021, 86):

Ռուսաստանի Դաշնությունը ուշացումով, բայց այդ առումով որոշ քայլեր ձեռնարկել էր: Մասնավորապես, «Կանխիկ դրամի շրջանառության սահմանափակման լրացուցիչ միջոցառումների մասին» ՌԴ նախագահի 1992 թ. հունիսի 14-ի N 622 հրամանագրով՝ որպես առաջին քայլերից մեկը, սահմանափակվեց կանխիկ դրամի շրջանառությունը (Указ президента РФ 1992): Դրանով ձեռնարկություններին (անկախ սեփականության կազմակերպաիրավական ձևից), կազմակերպություններին, հաստատություններին պարտադրվեց նորմայից ավել կանխիկ դրամը պահել միայն բանկային հաստատություններում: Միաժամանակ, ՌԴ տրանսպորտի նախարարության օդային տրանսպորտի դեպարտամենտին թույլատրվեց պաշտպանության, ներքին գործերի և անվտանգության նախարարությունների ուղևորների և բեռների փոխադրումն իրականացնել անկանխիկ եղանակով՝ փոխադրումների սահմանված ձևերի հիման վրա: Այս ամենի նպատակը սպասվելիք սղաճի բացասական հետևանքները մեղմելն էր:

ՌԴ նախագահի 1993 թ. հուլիսի 26-ի հրամանագրով դադարեցվեց 1961–1992 թվականների նմուշի խորհրդային հին թղթադրամների շրջանառությունը և ՌԴ ԿԲ-ի կողմից Ռուսաստանի տարածքում շրջանառության մեջ դրվեց 1993 թ.

թողարկված նմուշի ռուսական ռուբլին: Դրանով Ռուսաստանը դուրս եկավ խորհրդային ռուբլու գոտուց՝ այնտեղ թողնելով մյուս հանրապետություններին: Հետագայում՝ մինչև 1993 թվականի նոյեմբերի առաջին կեսը, մյուս հանրապետությունները (բացառությամբ Հայաստանի) ևս շրջանառության մեջ դրեցին իրենց ազգային դրամանիշները: Իսկ Հայաստանի իշխանությունը այդ առումով ոչինչ չձեռնարկեց:

Վ. Ավետիսյանի կարծիքով, կենտրոնացված պլանավորման ֆինանսական համակարգից անցումը տվյալ հատվածի լիարժեք շուկայական կազմակերպմանը տարիներ կտևեր: Մինչդեռ ֆինանսական ոլորտի շուկայական հարաբերություններին անցումը պահանջում է անհապաղ կատարել այդպիսի կազմակերպումը: Դա արագ կարգավորվեց Արևելյան Եվրոպայի շատ երկրներում և նախկին խորհրդային մերձբալթյան երկրներում: Սակայն Ալբանիայում, Բուլղարիայում, Մակեդոնիայում, Ռումինիայում և ԱՊՀ բոլոր երկրներում այն արագ չիրականացվեց, և դա հանգեցրեց տնտեսական ծանր հետևանքների (Ավետիսյան 1999, 126): Մասնավորապես, Հայաստանում շրջանառության մեջ եղած դրամական զանգվածը բազմապատիկ անգամ գերազանցում էր ապրանքային պաշարների ծավալը: Դա հանգեցրեց նաև վարկային ռեսուրսների արժեզրկմանը: «Եվ, այնուհանդերձ, վարկային ռեսուրսների այդքան արագ կորուստները չդարձան այն գլխավոր բացասական գործոնը, որին հասցրեց ֆինանսական ոլորտում բարեփոխումների դանդաղումը: Դրա հետ միասին, ավելի մեծ բացասական պատճառ եղան ԿԲ-ի ու ՎԲ-ի վերափոխելու հետևանքները» (Ավետիսյան 1999, 126): Հայաստանի իշխանությունը չէր սպասում գործերի նման ընթացքին: Չէր պատկերացնում, որ ՌԴ-ն կարող է դուրս գալ ռուբլու գոտուց: Մինչդեռ ՌԴ-ն, լավ պատկերացնելով ռուբլու գոտուց մյուս հանրապետությունների դուրս գալու հետևանքները, ինքն առաջ անցավ մյուսներից՝ Ռուսաստանի տարածքում շրջանառության մեջ դնելով 1993 թ. թողարկված նմուշի ռուսական ռուբլին:

Հայաստանը, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ազգային արժույթը շրջանառության մեջ դնելը շատ ուշացրեց: Ըստ Բելովեժյան թավշուտում 1991 թ. դեկտեմբերի 8-ին Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ստորագրված անկախ պետությունների համագործակցության մասին համաձայնագրի (ԱՊՀ) (որին Ալմաթիում դեկտեմբերի 21-ին միացավ խորհրդային նախկին ևս 9 հանրապետություն)՝ կողմերը պաշտպանության և այլ հարցերի հետ միասին պարտավորվեցին համագործակցել տնտեսական բնագավառում: Հետևաբար, խորհրդային ռուբլու գոտուց դուրս գալը և ազգային դրամանիշների թողարկումն էլ պետք է քննարկվեր և համաձայնեցվեր այդ նորաստեղծ կառույցում: Սակայն, ինչպես ցույց տվեց փորձը, յուրաքանչյուր մասնակից երկրի համար սոցիալ-տնտեսական նշանակություն ունեցող այդ կենսական հարցը «դուրս էր մնացել նրանց տեսադաշտից»:

Մինչև 1992 թ. հունվարի 1-ը ՀՀ պետական բանկի իրավագործությունները խիստ սահմանափակ էին: Այսպես, պետական բանկը իրավասու չէր վերա-

հսկելու և կարգավորելու գործող բանկերի գործունեությունը: Բացի առկա պետական բանկերից, ՀՀ-ում գործել են նոր ստեղծված 45 առևտրային բանկեր: Բանկային համակարգում տիրել է կամայական գործողությունների ու թողտուլության մթնոլորտը, իսկ բանկային կապիտալի համարժեքության ցուցանիշները եղել են խիստ ցածր (բանկային կապիտալ-ակտիվներ հարաբերակցությունը՝ 2,2%) (Սարգսյան 1999, 237): Չնայած այն հանգամանքին, որ 1991 թ. դեկտեմբերին ՀՀ պետական բանկի վրա են դրվել ՀՀ ազգային բանկի գործառույթները, բայց այն չէր կարող լիարժեք հսկողություն սահմանել բանկային համակարգի, առավել ևս՝ շրջանառության մեջ գտնվող 1961-1992 թթ. խորհրդային ռուբլու զանգվածի նկատմամբ: Միայն 1993 թ. ապրիլի 27-ին է ընդունվում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» (նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին») ՀՀ օրենքը (Ազգային բանկը վերանվանվում է ՀՀ կենտրոնական բանկ):

ՌԴ ռուբլու գոտուց դուրս գալուց ավելի քան 3 ամիս հետո Հայաստանը ազգային արժույթը շրջանառության մեջ դնելու համար հարկադրված քայլեր ձեռնարկեց: ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ հոկտեմբերի 13-ին ստեղծվեց Հայաստանի Հանրապետության դրամաշրջանառության կարգավորման պետական հանձնաժողով՝ ՀՀ Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահի ու ՀՀ կենտրոնական բանկի նախագահների և ՀՀ ֆինանսների նախարարի համանախագահությամբ: Այդ հանձնաժողովը լիազորվեց որոշումներ կայացնելու՝ ելնելով իրավիճակից: Մեկ ամիս հետո միայն Հայաստանի Հանրապետության դրամաշրջանառության կարգավորման պետական հանձնաժողովի 19.11.93 թ. N 15 որոշմամբ ՀՀ տարածքում շրջանառության մեջ է դրվում ազգային արժույթը՝ դրամը: Իրավիճակից և անվերահսկողությունից օգտվեցին որոշակի անհատներ և կազմակերպություններ, որոնք, մինչև ազգային դրամը շրջանառության մեջ մտցնելը, մյուս հանրապետություններում (հատկապես՝ Թուրքմենստանում, Ուզբեկստանում և Ղազախստանում) չփոխանակված խորհրդային դրամանիշների զգալի մասը տեղափոխեցին Հայաստան: ՀՀ-ում առկա շրջանառության մեջ եղած խորհրդային ռուբլու զանգվածը բազմակի գերազանցում էր ապրանքանյութական արժեքների մեծությունը: Այս հանգամանքը Հայաստանի գերսղաճի հիմնական պատճառներից մեկն էր դարձել:

Գերսղաճի առաջացմանը մեծ չափով նպաստեց նաև ապրանքների գների և ծառայությունների սակագների չնախապատրաստված ազատականացումը: ՌԴ-ն և ԱՊՀ անդամ մյուս երկրները, 1992 թ. հունվարի 2-ից սկսած, անցել էին ազատ գների ու սակագների համակարգին: Դրան հետևեցին 1992 թ. հունվարի 3-ին այդպիսի համակարգին անցնելու՝ ՀՀ գերագույն խորհրդի որոշումը (Հ.Ն-0503-1), հունվարի 4-ին՝ ՀՀ նախագահի հրամանագիրը (ՆՀ-48): Նույն օրը եղավ նաև ՀՀ կառավարության որոշումը Շուկայական ազատ գների և սակագների մասին: Բացառություն էին կազմում մի քանի ապրանքների (հաց, կաթ, մածուկ և կերակրի աղ, դեղամիջոցներ և բժշկական նշանակության իրեր)


գների ու ծառայությունների (բնակչությանը մատակարարվող էլեկտրական և ջերմային էներգիա, հեղուկ և բնական գազ, բնակվարձ, բնակչությանը խմելու ջուր, բնակելի շենքերի ջեռուցում և տաք ջրամատակարարում, կոյուղու ծառայություն և կենցաղային աղբի տեղափոխում, երկաթուղով և օդային տրանսպորտով ուղևորների ու բեռների տեղափոխում, մերձքաղաքային և քաղաքային տրանսպորտով ուղևորների փոխադրում, հեռախոսային, հեռագրական և փոստային կապ) սակագների մեծությունները, որոնց նկատմամբ կիրառվել են որոշ սահմանային գործակիցներ: Քանի որ այս ամենը նախապես ծրագրված, պլանավորված չէր, և չկար գիտականորեն հիմնավորված ռազմավարություն, Հայաստանում ապրանքների և ծառայությունների սղաճի տեմպերը «աստղաբաշխական» թվերի հասան: Անցումային շրջանի մասնագետներից մեկի գնահատմամբ, չնայած խորհրդային նախկին հանրապետություններից շատերն անկախություն ձեռք բերելուց հետո ունեցել են տնտեսության նույն կառուցվածքը, սակայն նրանց տնտեսությունների սղաճի տեմպերը շատ տարբեր են եղել: Օրինակ, 1994 թ. ապրիլին 1990 թ. դեկտեմբերի նկատմամբ Հայաստանում գների մակարդակը բարձր է եղել 13440 անգամ, Ուկրաինայում՝ 5974, Վրաստանում՝ 1692, Ադրբեջանում՝ 828, Ռուսաստանում՝ 541, մերձքաղաքային հանրապետություններում (Լիտվա, Էստոնիա, Լատվիա) համապատասխանաբար՝ 199, 59 և 58 անգամ (Илларионов 1995, 6):

Դեռևս ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 9-րդ հնգամյակում խնդիր էր դրվել մշակել երկրի տնտեսության զարգացման նպատակային համալիր ծրագիր (ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976–1980 թվականների հիմնական ուղղությունները 1976, 23): Արդեն «10-րդ հնգամյակի առաջադրանքում ընդգրկված էին 200 կոմպլեքսային գիտատեխնիկական ծրագրեր» (Քոթանյան 1982, 67):

Նպատակային համալիր ծրագրերի մշակման փորձը հետագայում հիմք դարձավ հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման համար: Սակայն նորանկախ երկրի իշխանավորները չփորձեցին օգտվել խորհրդային տարիների փորձից: Նրանց հրապուրել էր շուկայական հարաբերություններին անցման ռուսական փորձը (Ե. Գայդարի կառավարության): Տարիներ անց պրոֆեսոր Եղիազարյանը նշել է. «Ծրագրանպատակային մոտեցումը սկզբունքորեն կարող է կիրառվել ցանկացած հիմնախնդրի լուծման համար, հետևաբար, ժողովրդական տնտեսության տվյալ ժամանակի հիմնախնդիրներից յուրաքանչյուրը, անկախ կառավարման հիերարխիայի մակարդակից, օբյեկտների ու սուբյեկտների ընդգրկումից, ժամանակահատվածից, կարող է դառնալ ծրագրանպատակային մշակման օբյեկտ» (Եղիազարյան 1995, 23):

Պրոֆեսոր Սուվարյանի տեղին և անաչառ բնորոշմամբ՝ «Այդ ժամանակաընթացքում (անկախացման առաջին տարիները – Մ.Մ., Գ.Մ.) տնտեսական կյանքը գերազանցապես ընթացել է կոնկրետ իրադրության կողմից թելադրվող հապշտապ որոշումների, Ռուսաստանի Դաշնության տնտեսական քաղաքականության հաճախ անհարկի կրկնօրինակման և հատկապես՝ արևմտյան

Ֆինանսական կազմակերպությունների երաշխավորությունների հիման վրա: Սա փորձերի, անխուսափելի սխալների, դրանց հաղթահարման ճիգերի, տառապանքների ճանապարհ է, որը աշխարհի ոչ մի երկրի հաջողություն չի բերել, այլ ընդհակառակը, հանգեցրել է լուրջ տնտեսական դժվարությունների ու սխալների» (Սուվարյան 1996, 65): Իշխանության եկած ուժը պատրաստ չէր ոչ միայն նոր տնտեսական հարաբերությունների ձևավորման, այլև չուներ սոցիալական ոլորտի (այդ թվում՝ գիտության) զարգացման որևէ ծրագիր կամ հայեցակարգ: Իրավիճակի թելադրանքով իրականացված տնտեսական վերափոխումների հետևանքով, երկրի ՀՆԱ-ն 1994 թ. 1990 թ. նկատմամբ կազմեց ընդամենը 49.4 տոկոս (հաշվարկել են հեղինակները, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն 1997, 119 և 120 էջերի հիման վրա), պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը հասավ 91.6 հազարի: Վիճակն ավելի վատացավ պետական միջոցների զանգվածային սեփականաշնորհման ու ապապետականացման հետևանքով: Նախատեսվել էր սեփականաշնորհել և ապապետականացնել արդյունաբերական, տրանսպորտի և հաղորդակցության, շինարարական համալիրի, կապի, սոցիալական ոլորտի և այլ օբյեկտներ՝ 7716 հատ, որոնցից 3541-ը արդեն 1996 թվականի մարտի 9-ի դրությամբ սեփականաշնորհվել և ապապետականացվել էին: Ամբողջ տնտեսության և դրա առանձին ճյուղերի շարժընթացը բնութագրում են գծապատկերի տվյալները:



Գծապատկեր. ՀՆԱ-ի և տնտեսության որոշ ճյուղերի շարժընթացը 1990 թվականի համեմատ

Հիմնավորված չէին նաև սեփականաշնորհման ու ապապետականացման ծրագրերը: Դրանցում առանձին դեպքերում, որոշ «ուղղումների» պատճառով տպավորություն է ստեղծվում, թե օրենքի նախագիծը մշակողները և հաստատողները սեփականաշնորհվող օբյեկտների վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն չեն ունեցել: Օրինակ, ՀՀ կառավարության 1994 թ. սեպտեմբերի 28-ի N 467 որոշումով սեփականաշնորհման սերտիֆիկատների արժեքը հայտարարվել էր 10 հազար դրամ, իսկ 1995 թ. մարտի 1-ից՝ 20 հազար դրամ (Մարկոսյան 1995, 74): Այսինքն՝ կամ սեփականաշնորհվող օբյեկտները նախապես կրկնակի էժան են գնահատվել, կամ այդ օբյեկտը գնորդը կրկնակի նվազ գումարով էր գնելու: Փաստացի, գնորդը այն ավելի էժան է ձեռք բերել: Բանն այն է, որ գնորդները, օրենքի համաձայն, օբյեկտը կարող էին ձեռք բերել միայն սերտիֆիկատներով: Դրանք վերավաճառելու իրավասություն ունեին միայն բանկերը: «Այսպես, 1995 թ. նոյեմբերի 1-ի տվյալներով բանկերը սերտիֆիկատները գնում էին 7-7,2 հազար դրամով և վաճառում 7,2-7,8 հազար դրամով (Մարկոսյան 1995, 74): Նշանակում է՝ քաղաքացիները (սերտիֆիկատ վաճառողները) 20 հազար դրամանոց սերտիֆիկատները վաճառել են 7-7,2 հազար դրամով, իսկ սեփականաշնորհվող օբյեկտը փաստացի ձեռքբերողները մեկ սերտիֆիկատ ձեռքբերելու համար 20 հազար դրամի փոխարեն վճարել են 7,2-7,8 հազար դրամ (Մարկոսյան 1995, 61) (61-64%-ով պակաս – Մ.Մ., Գ.Մ.): Բացի այդ, գնորդները հիմնականում իշխանական լծակներին մոտ կանգնած անձինք էին: Այլ կերպ ասած՝ խախտվել է սոցիալական արդարության սկզբունքը:

Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ անկախացման առաջին 8 տարում միայն գյուղատնտեսությունն է հասել 1990 թվականի ցուցանիշներին: Տնտեսության մնացած ճյուղերը զարգացման տեմպերով զգալիորեն հետ են մնացել 1990 թվականի մակարդակից:

Այսպիսով, հետազոտությունը վկայում է, որ, չունենալով շուկայական տնտեսավարման անցնելու զարգացման և ռազմավարական ծրագիր, Հայաստանը առաջին 8 տարում զգալի կորուստներ է կրել:

### **Եզրակացություններ**

Հայաստանում իշխանության եկած ուժերը, առանց հիմնավորված ծրագրի և ռազմավարության, հետևելով Ե. Գալդարի կառավարության ռուսական փորձին, ստանձնեցին շուկայական հարաբերությունների ձևավորումը:

Անկախացումից հետո երկրի իշխանավորները չփորձեցին օգտվել խորհրդային տարիների նպատակային համալիր ծրագրերի մշակման փորձից (հետագայում այն հիմք հանդիսացավ հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման համար):

Հայաստանը, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ազգային արժույթը շրջանառության մեջ դնելը շատ ուշացրեց: Ըստ ԱՊՀ երկրների ստեղծման վերաբերյալ համաձայնագրի՝ մասնակից երկրները պաշտպանության և այլ հար-

ցերի հետ միասին պարտավորվել են համագործակցել տնտեսական բնագավառում: Հետևաբար, խորհրդային ռուբլու գոտուց դուրս գալը և ազգային դրամանիշների թողարկումն էլ պետք է քննարկվեին և համաձայնեցվեին այդ նորաստեղծ կառույցում: Սակայն, ինչպես ցույց տվեց փորձը, մասնակից յուրաքանչյուր երկրի համար սոցիալ-տնտեսական նշանակություն ունեցող այդ կենսական հարցը «դուրս էր մնացել նրանց տեսադաշտից»:

Գերսոլաճի առաջացմանը մեծ չափով նպաստեց ապրանքների գների և ծառայությունների սակագների չնախապատրաստված (առանց գիտականորեն հիմնավորված ռազմավարության) ազատականացումը: Հայաստանը 1992 թ. հունվարի 5-ից ազատականացրեց ապրանքների գներն ու ծառայությունների սակագները (բացառությամբ որոշ ապրանքների գների և ծառայությունների սակագների):

Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացները ևս հիմնավորված չէին (չնայած դրա վերաբերյալ օրենքի առկայությանը): Դրա մշակմանը պետք է նախորդեին սեփականաշնորհվող և ապապետականացվող օբյեկտների հիմնավորված գույքագրումը և վերագնահատումը, տնտեսական մրցակցության պաշտպանությունը կարգավորող օրենսդրության ընդունումը:

Անցումային շրջանի դասերը անհրաժեշտ է հաշվի առնել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հետագա (միջնաժամկետ և հեռանկարային) ծրագրերը մշակելիս: Իսկ այս ամենի հիմքում պետք է ընկած լինեն Հայաստանի ազգային գաղափարախոսության մշակումն ու ընդունումը:

### **Շնորհակալական**

Մեր երախտագիտության խոսքն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Միքայելի Սուվարյանին սույն ուսումնասիրության շրջանակում ցուցաբերած տեղեկատվական աջակցության համար:

### **Գրականություն/References/Литература**

1. Ավետիսյան Վ.Ս. 1999, Անցումային շրջանի փուլայնությունը նորանկախ պետություններում և Արևելյան Եվրոպայի երկրներում, Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում. տեսություն և արդյունքներ, Երևան, «Պետական ծառայություն», 122–131:  
Avetisyan V.S. 1999, The Phases of the Transition Period in the Newly Independent States and Eastern European Countries, Economic Transformations in the Transition Period: Theory and Results, Yerevan, State Service, 122–131 (in Armenian).
2. Եղիազարյան Բ.Հ. 1995, Տնտեսական հիմնախնդիրների և մշակվելիք նպատակային ծրագրերի ամբողջական ցանկի կազմման մեթոդական մոտեցումներ, Էկոնոմիկա, N 7–9, 22–34:

- Yeghiazaryan B.H. 1995, Methodological approaches to compiling a complete list of economic problems and target programs to be developed, *Economics*, N 7–9, 22–34 (in Armenian).
3. Զատիկյան Թ.Ա. 1993, Էկոնոմիկան ճգնաժամից դուրս բերելու որոշ նկատառումներ, *Էկոնոմիկա*, N 1–2, 24–33:  
Zatikyan T.A. 1993, Some Considerations for Bringing the Economy out of Crisis, *Economics*, N 1–2, 24–33 (in Armenian).
  4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն 1997, Երևան, <https://armstat.am/file/doc/99506978.pdf> (ներբեռնման օրը՝ 11.03.2025):  
Statistical Yearbook of Armenia 1995, 1996, National Statistical Service of the Republic of Armenia 1997, Yerevan, <https://armstat.am/file/doc/99506978.pdf> (Accessed on: 11.03.2025) (in Armenian).
  5. Մարկոսյան Ա.Խ. 1995, Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը, տեսության և պրակտիկայի հարցեր, Երևան, տպագրատուն «Հակոբ Մեղապարտ»:  
Markosyan A.Kh. 1995, The Process of privatization and Denationalization, *Issues of Theory and Practice*, Yerevan, Publishing house Hakob Meghapart (in Armenian).
  6. Մարկոսյան Ա.Խ. 1996, Սեփականաշնորհման և ապապետականացման ռազմավարությունը Հայաստանի Հանրապետությունում, *Էկոնոմիկա*, N 1–3, 61–72:  
Markosyan A.Kh. 1996, Privatization and Denationalization Strategy in the Republic of Armenia, *Economics*, N 1–3, 61–72 (in Armenian).
  7. ՄԶԱԶ 2001, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Հայաստան, հրատ. նշված չէ:  
UNDP 2001, 10 Years of Independence and Transition Period in Armenia National Human Development Report, Armenia, Publisher not indicated (in Armenian).
  8. Միքայելյան Մ. 2021, ՀՀ տնտեսության կարգավորման հակակշիռների ձևավորման հարցի մասին, *Լրաբեր հասարակական գիտությունների*, N 1, 84–99:  
Mikayelyan M. 2021, On the Issue of Forming Counterbalances in the Regulation of the RA Economy, *Journal of Social Sciences*, N 1, 84–99 (in Armenian).
  9. Մկրտչյան Հ.Վ. 1996, Հողային հարաբերությունները և ֆերմերային տնտեսությունների ձևավորումը, *Էկոնոմիկա*, N 10–12, 58–63:  
Mkrtchyan H.V. 1996, Land Relations and the Formation of Farms, *Economics*, N 10–12, 58–63 (in Armenian).
  10. Սարգսյան Տ.Ս. 1999, Բանկային նոր համակարգի ձևավորումը Հայաստանում, Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում. տեսություն և արդյունքներ, Երևան, «Պետական ծառայություն», 237–240:  
Sargsyan T.S. 1999, Formation of a New Banking System in Armenia, *Economic Transformations in the Transition Period: Theory and Results*, Yerevan, State Service, 237–240 (in Armenian).
  11. ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976–1980 թվականների հիմնական ուղղությունները 1976, Երևան, հրատ. նշված չէ:  
Main Directions of Development of the National Economy of the USSR in 1976–1980, 1976, Yerevan, Publisher not indicated (in Armenian).

12. ՍՍՀՄ Սահմանադրություն 1983, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (հիմնական օրենք): Ընդունված է ՍՍՀՄ իններորդ գումարման Գերագույն սովետի յոթերորդ արտահերթ նստարջանում 1977 թ. հոկտեմբերի 7-ին (ՍՍՀՄ 1981 թ. հունիսի 24-ի օրենքով կատարված լրացումով), Երևան, «Հայաստան»:  
Constitution of the USSR 1983, Constitution of the Union of Soviet Socialist Republics (Fundamental Law), Adopted at the Seventh Extraordinary Session of the Supreme Soviet of the USSR of the Ninth Convocation on October 7, 1977 (as amended by the USSR Law of June 24, 1981), Yerevan, Hayastan (in Armenian).
13. Սուվարյան Յու.Մ. 1996, Ռազմավարական կառավարում. մեթոդաբանությունը և արդի հիմնահարցերը: ԵրԺՏԻ, Երևան, «Տնտեսագետ»:  
Suvaryan Yu.M. 1996, Strategic Management: Methodology and Current Issues, Yerevan Institute of Economics, Yerevan, Economist (in Armenian).
14. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 5 դեկտեմբերի 2000 թ., ՀՕ-112, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1272&lang=arm> (ներբեռնման օրը՝ 10.01.2026):  
RA Law "On Protection of Economic Competition", December 5, 2000, LR-112, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1272&lang=arm> (Accessed on: 10.01.2026) (in Armenian).
15. Քոթյանյան Մ.Խ. 1982, Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման նպատակային կոմպլեքսային ծրագիրը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:  
Kotanyan M.Kh. 1982, The Targeted Complex Program of Socio-Economic Development of the Armenian SSR, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
16. Ֆահրադյան Հ.Պ. 1996, Հայաստանի Հանրապետությունում ագրարային արմատական բարեփոխումների արդյունքների և մի քանի խնդիրների մասին, Էկոնոմիկա, N 1-3, 28-36:  
Fahradyan H.P. 1996, On the Results of Radical Agrarian Reforms in the Republic of Armenia and Some Problems, Economics, N 1-3, 28-36 (in Armenian).
17. Илларионов А. 1995, Природа российской инфляции, Вопросы экономики, N 3, 4-21.  
Illarionov A. 1995, The Nature of Russian Inflation, Voprosy Ekonomiki, N 3, 4-21 (in Russian).
18. Смит А. 1962, Исследование о природе и причинах богатства народов, Москва, «Соцэкгиз».  
Smith A. 1962, An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, Moscow, Sotsekgiz (in Russian).
19. Указ Президента РФ от 14.06.1992 N 622 "О дополнительных мерах по ограничению налично – денежного обращения" (дата обращения: 10.01.2026).  
Decree of the President of the Russian Federation of 14.06.1992 N 622 "On Additional Measures to Restrict Cash Circulation", [https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_561/](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_561/) (Accessed on: 10.01.2026) (in Russian).